

ՖՈՒԴԻՑԱՄԱՅԻՑ  
ՄԻԶԵՎ ԱՐԱՐԱՏ




Жизне - самому же  
горому же человеку.

Аришан

21. XI. 64г.






Հայակենիրան


ԵՐԵՎԱՆ

1963



ԱՐԺՎԻՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՖՈՒԶԻՉԱԱՅԱՅԻՑ  
ՄԻԶԵՎ ԱՐԱՐԱՏ



Արծվին Գրիգորյանը ծնվել է 1935 թվականին: 1958 թվականին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետը: Այժմ նա աշխատում է «Երևաննախագիծ» ինստիտուտում որպես ավագ ճարտարապետ: Իր մասնագիտությանը զուգահեռ Ա. Գրիգորյանն զբաղվում է նկարչությամբ: Նա իր ցուցահանդեսն է ունեցել 1960 թվականին:


Ա. Գրիգորյանի այս զբաղույթը մի պատկերագարդ ակնարկ է այն երկրների մասին, ուր հեղինակը եղել է վերշերս: Գիրքը ձևավորել է հեղինակը, և օգտագործված են նրա նեպանկարներն ու ջրանկարները:


АРЦВИН ГАЙКОВИЧ ГРИГОРЯН  
ОТ ФУДЗИЯМЫ ДО АРАРАТА

(На армянском языке)

Армянское государственное издательство  
(Айпетрат), Ереван, 1963

# ՃՇՊՇԱՒԻՑ






## ԵՐԳԵՐ ՏՈՎԻՈՅԻ ԺՈՎԱԺՈՅԻՄ

Հեռավոր Արևելքում կա մի քաղաք Վլադիվոստոկ անունով։ Սովետական Միության ամենամեծ նավահանգիստներից է դա։ Ամեն օր տասնյակ մարդատար ու առևտրական նավեր են մեկնում այնտեղից։ Եվ ահա, 1960 թվականի ապրիլի տասնհինգին<sup>8</sup> մեր արևելքի այդ դարպասից Ասիայի շուրջը ճանապարհորդելու դուրս եկավ «Միասիլ Կալինին» շերմանավը. դրանով մենք ուղևորվեցինք ճապոնիա։

Հաջորդ օրը երեկոյան նավը մտավ ճապոնական Հոկայդո ու Հոնսյու ամենամեծ կղզիների միջև ընկած Սանգարյան նեղուցը։

Նավակողից նայողների աշքին հեռվում երևում էին Կասիմա կղզիները, ճապոնացի ձկնորսների նավակները և մի քանի ուրիշ նավեր։ Գրեթե բոլոր ուղևորները տախտակամածի վրա էին։ Ճապոնական կղզիների պատկերը հիանալի էր։ Աջ կողմում՝ Հոնսյուի լեռներն են միարձակում ծովը, և իրիկնային կիսամշուշի մեջ աղոտ կերպով փայլիլում են ձյունապատ



գագաթները: Բայց եղանակը հետզհետե փոխվում է, ծովի վրա կախվում են մութ ամպերը:

Ուշ երեկոյան ջերմանավն անցավ Սանգարյան նեղուցով և գուրս եկավ Խաղաղ օվկիանոս: Մի երկու օր անց մենք Տոկիոյի ծովածցով ընթանում էինք գեպի Խոկոհամա նավահանգիստը:

Հազարավոր ճապոնացիներ եկել էին դիմավորելու սովետական զրոսաշրջիկներին: Եկել էին կարմիր դրոշակներով, ողջունի պատառներով: Նրանք երգում էին սովետական երգեր: Այո, սովետական երգեր:

Մինչ ձևակերպվում էին մեր փաստաթղթերը, դիմավորողներն ու մերոնք փոխադարձ «Համերգներ» էին տալիս: Ճապոնացի երիտասարդները պարում էին ուղղակի նավամատուցում, իսկ մենք՝ տախտակամածի վրա: Ճապոնական երգերին ու պարերին հաջորդում էին մեր պարերն ու երգերը, եվ այդ ամենը ընդունվում էր բուռն ծափահարություններով, հավանության բացականչություններով:

## ԿԾՄԾԿՈՒՐԾՆ

ՈՒ

ՃԱՊՈՆԱՅԻ

ԵՐԵԽԱՆԵՐԸ

Մենք արգեն ավտոբուսներում ենք: Գնում ենք կամակուրա քաղաքը, որը Խոկոհամայից հարավ է: Տուրիզմի և ուխտագնացության կենտրոն է այդ Հնագույն քաղաքը: Հայտնի է իր պատմական հոլշարձաններով: Կամակուրայում է գտնվում պատերազմի աստված Հատիմանի տաճարը (1193 թվական) և Բուդդայի տաճանչները մետրանոց բրոնզե կուռքը (XIII դար): Աշխատանքի





օր էր, բայց Բուղդայի կուռքի մոտ հոծ բազմություն էր հավաքվել. հատկապես երեխաներ: Մրանք շրջապատեցին մեզ և սկսեցին հարցեր տալ: Աշակերտներից ետ չէին մնում նաև նրանց ուսուցիչները: Դպրոցականների մեծ բազմության ներկայությունն այդտեղ մեղ հետաքրքրեց: Պարզվեց, որ կրոնական ու պատմական վայրերի այցելությունը պարտադիր է տարրական դպրոցի աշակերտների համար: Իսկ տարրական դպրոցում անցնում են՝ մայրենի լեզու, թվաբանություն, աշխարհագրություն և պատմություն: Ուսման տևողությունը վեց տարի է: Ընդհանուր կրթությունը լրացվում է բարոյականությանն ու կենցաղին նվիրված դասերով: Բացի դրանից, ձապոնիայում կա նաև ցածր կրթություն, որը տևում է երեք տարի, այդքան է նաև միջնակարգ կրթության տևողությունը: Տարրական և ցածր կարգի դպրոցներում ուսուցումը պարտադիր է և ձրի. սակայն նյութական ծանր դրության պատճառով շատ երեխաներ ի վիճակի չեն լինում դպրոց հաճախել:

Նրանք ստիպված աշխատում են միքք ձեռնարկություններում, որոնց տերերը անխնա շահագործում են անշափահասներին:

Ինչպես այդ օրերին, այնպես էլ հետագայում լրագրերը հաղորդում էին, որ արտադրության մեջ աշխատող երեխաների շրջանում շատ դժբախտ պատահարներ են եղել: Տոկիո գալուց մի քանի օր առաջ մենք իմացանք, որ մայրաքաղաքի ձեռնարկություններից մեկում մեքենան վնասել էր տասնմեկ տարեկան կոկ Կիմուրային:



## ՄԻԶՈՒՈՎ ՀԻՐՈՎՈ

— Իսկ հիմա ո՞ւր:

— Ֆուձի, Իոկոհամայի արվարձանը:

Մեր մեքենաները սլանում են լեռնային ոլորապտույտ ճանապարհով, անցնում հարուստ բուսականությամբ ծածկված լանջերով: Կանաչ ֆոնի վրա մերթայստեղ, մերթ այնտեղ երևում են ծաղկող բակում՝ «սակուրայի» բաց վարդագույն ծառերը: Կատարները դեպի երկինք են ճգում ճապոնական սոճիները: Լեռնաշխարհի անհասանելի տեղերում աճել են արտասովոր բներով ծառերը, իսկ նեղ կիրճում խենթի պես քրքր ջում է լեռնային գետակը...

Բնության գեղեցկությամբ հրապուրված, մենք չնկատեցինք, թե ինչպես ավտորուսում սկսեց հնչել երգը: Երգում էր մեկ ուղեկցող ճապոնացի աղջիկը՝ Միձուոկա Հիրոկոն: Այս անունը հայերեն նշանակում է լեռնային ջուր: Նրա ձայնը մաքուր էր, ինչպես լեռնային գետակի կարկաչը:

— Որտեղից գիտեք մեր երգերը, — հարցրի ես:

— Ես ուզում եմ ալելի լավ ճանաչել Սովետական Միությունը: Իսկ երգն օգնում է ալելի լավ համականակ ժողովրդի հոգին: Զէ՞ որ երգը, ինչպես

ասում են ձեզ մոտ, օգնում է կառուցել ու ապրել, — ժպտալով պատասխանեց Միծուղկան:



Շուտով ամբողջ ավտոբուսն ակնեց ձայնակցել երիտասարդ մեներգչուհուն: Երգում էինք նաև հայկական երգեր: Եվ ճապոնիայի բարձր լեռներում զրնգում էր հայկական երգն ու սլանում հեռուները...

Ասֆալտապատ խճուղին աստիճանաբար իջնում էր գեղի ծովը:


Զգալիորեն փոխեցին բնության տեսարանները: Տեղտեղ դրանք մեր սկծովյան ափերի նման էին: Լեռներն իրենց ուրվագծերով, խիտ անտառներով ընդհուպ մոտենում էին ծովին: Պատուհանից երբեմն երկում էին բրնձի մասնատված գաշտերը...

Խաղաղ օվկիանոսի ափերին գտնվող սոճիները շատ ցածրիկ են, որովհետեւ այստեղ հաճախ ուժեղ քամիներ են փչում:

Եվ ամենուրեք, նույնիսկ լեռներում ու ծովափին, ճշան ոեկլամներ կան: Մի տեղ՝ տասը մետրանոց շիշ, մի ուրիշ տեղ՝ մեքենայի հսկայական անիվներ, մի այլ տեղ՝ գլանակ, լուցկիներ...



Մ Ա Շ



## «ՄԱՀԱՓԱՐՏՆԵՐԸ»

Ճապոնիայի մայրաքաղաք Հասանք ապրիլի տասնինին: Այստեղ, փողոցներում մեքենաների անվերջանալի հեղեղ է. Տոկիոյում մեկ միլիոնից ավելի ավտոմեքենա կա: Ավտոտրանսպորտի այդպիսի զարգացումը մի պատուհաս է բնակչության համար: Շահույթի հետևից ընկած ձեռնարկատերերը քաղաքային երթևեկության միջոցների, հատկապես տաքսիների վարորդներից պահանջում են մեծ շրջանառություն: Տաքսիների վարորդներին ճապոնիայում հաճախ անվանում են «մահապարտներ», որովհետև քաղաքի փողոցներով նրանք սլանում են մեծ արագությամբ: Եթե վարորդը չկատարի իր պլանը, աշխատանքից իսկույն կազատին: Եվ դրա հետևանքով, միայն մայրաքաղաքում ամեն օր ավտոմոբիլային մոտ 200 աղետ է լինում:

## ԳԱՏՄՈՒԹՅԱՆ ԷԶԵՐԻՑ

Աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկը դառնալուց առաջ, էղոն (Տոկիոյի հին անունը դարեր շարունակ ձկնորսական փոքրիկ մի գյուղ է եղել: Տասնհինգերորդ դարի կեսերին Տոկիոյի կենտրոնում կառուցվել է մի ամրոց, և քաղաքը դարձել է խոշոր հողատերերի՝ դայմիոների կա-

յան: Բայց ավելի մեծ թափով քաղաքն աճել է տասնվեցերորդ դարի վերջերից սկսած, երբ դարձել է սյոգունների\* մայրաքաղաքը:

Էղոն սյոգունների գլխավոր ամրոց ու մայրաքաղաք դարձնելը և կարևորագույն ցամաքային ճանապարհների խաչմերուկում գտնվելը նպաստեցին, որ այդ երիտասարդ քաղաքը բուռն զարգացում ապրի: Քաղաքն այն ժամանակ մի մեծ ու ամրացված ուղղմական ճամբար էր: Քարափի վրա կանգնած անառիկ ամրոցն իշխում էր ծովածոցի վրա. սրա ափին էլ գտնվում էր էղոն: Դայմիոնների բերդեր Հիշեցնող տները փոված էին ամրոցը շրջապատող սարահարթին: Դրանցից ավելի հեռու բնակիչների տներն էին: Արդեն այն ժամանակ քաղաքի բնակչությունը մեկ միլիոն մարդուց ավելի էր:


Սյոգունների իշխանության տապալումից հետո (1867—68 թթ.), էղոն դառնում է կայսեր աթոռանիստը և վերանվանվում է Տոկիոյի: Մեկ ու կես դարի ընթացքում քաղաքի բնակչությունը կրկնապատկվում է: Քսաններորդ դարի սկզբներին Տոկիոն ուներ ավելի քան 2 միլիոն բնակիչ:

1923 թվականին քաղաքում բռնկած հրդեհը տևեց երեք օր: Այդ աղետից հետո իրագործվեց Տոկիոյի վերակառուցումը:


## ԱՐԵՎԵԼՔԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Տոկիո հենց այս է նշանակում  
ճապոններեն:

«Արևելքի մայրաքաղաքի» համար բնորոշ է մեկ-երկու հարկանի փայտաշեն տնակների զուգակցումը ժամանակակից բազմահարկ երկաթբետոնե շենքերի հետ, սրանց մեջ սեղմված նեղլիկ ու ոլորապտույտ փողոցների խաչաձևումը լայն և աս ֆալտապատ ճանապարհների հետ, գործարանների ծանր ու մուալլ



\* Սյոգունները միջնադարյան ճապոնական բանակի հրամանատարներն էին և ամբողջ իշխանությունը նրանց ձեռքում էր:




իրանների հարևանությունը բուդդայական և սինտոիստական տաճարների սլացիկ ու թեթև շինությունների հետ: Յուրահատուկ երանգ են տալիս Տոկոյին գետերն ու ջրանցքները: Քաղաքի արևելյան մասով հոսում է Սումիդան: Սա մայրաքաղաքի բարձրագիր և ցածրադիր մասերի բնական սահմանն է:

Տոկոյի կենտրոնը կոչվում է Կոձիմատի: Այստեղ են գտնվում կայսերական պալատը և ընդարձակ այգին: Մյոզունյան ամրոցի տեղում կառուցված այդ պալատը, տաճարները և այլ շենքեր դասական ճարտարապետության յուրահատուկ նմուշներ են: Կան նաև կուլտուրայի բազմաթիվ հուշարձաններ: Պալատը և պուրակը շրջապատված են բարձր պարիսպով, լայն փոսով և հողապատնեշով: Տարեկան միայն երկու անգամ՝ նոր տարուն և կայսրի ծննդյան օրը հասարակ մարդիկ իրավունք են ստանում մտնելու այնտեղ: Մեզ նույնպես վիճակից հիանալ այդ պալատով միայն դրա առջևի հրապարակից:


## ԽԵՂԱԼԻՔՆԵՐԻ Թ



Թ  
Ե  
Ա  
Գ  
Ա  
Վ  
Ո  
Ր  
Ո  
Ւ  
Թ  
Յ  
Ն  
Ը



Գեղեցիկ է գարնան տոնը ձապոնիայում: Եենքերը, կամուրջները, զբոսայգիները, պարտեզները, բոլորը զարդարված են արհեստական ծաղիկներով, ծաղկաշղթաներով:




Ճապոնացիներն ասում են, թե այդ օրերին դժվար է ճանաչել նույնիսկ Հինձան՝ քաղաքի գլխավոր փողոցը, որ ձգվում է Սումիդա գետի աջ ափի երկայնքով։ Փայլում են խանութների ցուցափեղերը, գունագեղ պլակատները, ուստորանների պերճաշուք ու կլամները։


Հինձան Տոկիոյի առավել բանուկ փողոցն է։ Առանձին աշխուժություն են տալիս դրան խաղալիք վաճառողները։ Նրանք տեղավորվում են Հենց մայթերի վրա, և գնորդներ հրավիրում։ Սիկոկու կղզուց «եկել է» հանրածանոթ փայտե Գորշուկ Տանուկին, բազմել են ծիծաղաշարժ գորտի ձագուկները, կատուները, շնիկները, վագրերը։ Այդ բոլոր խաղալիքների մեջ աչքի է ընկնում Տանուկին։ Այս գաղանիկի մասին ճապոնացիները պատմում են մի հինավուրց առասպել։

... Ծնունդ է առել սա հեռավոր Սիկոկու կղզու Յաշիմա գեղատեսիլ բարձրավանդակի վրա։

Վաղուց, շատ վաղուց այդտեղ ապրում էր բարի գաղանիկ Տանուկին։ Դժվար էին ապրում Յաշիմայի շրավորները։ Եվ բարի Տանուկին օգնության հասավ։ Օգնում էր բրնձի ցանքին, պահպանում գյուղացիների տները։ Բայց փոքրիկ գորշուկի օգնությունը քիչ էր։ Եվ գաղանիկը շատ թանկարժեք մի թաս դարձավ։ Զքավորները ծախսեցին այդ թասն ու աղքատությունից փրկվեցին։ Այն ժամանակվանից բարի Տանուկիի սուր դնչիկը դարձավ երջանկության խորհրդանիշը։


Ճապոնական հիասքանչ խաղալիքի այդ փոքրիկ թագավորության անվիճելի տիրուչին է նրբագեղ տիկնիկ Կոկեշին։ Տիկնիկի հագուստի վրա տարբեր գույներով նկարված են բնության տեսարաններ և հինավուրց







տաճարներ, մինչև անգամ Տոկիոյի հեռուստատեսության աշտարակը: Հինգամ փողոցում մարդիկ գլխի ընկան, որ մենք օտարերկրացիներ ենք և սկսեցին իրար ընդհատելով, փայտե խաղալիքներ առաջարկել: Եվ շուտով մենք մեր գրուանքը շարունակեցինք բազմաթիվ տանուկիներով, կոկեշիներով և շատ ուրիշ խաղալիքներով ծանրաբեռնված:



## ԱՅՍՏԵՎ ԱՊՐՈՒՄ Է ՃԵՊՈՆԱՑԻՆ


Ճապոնական տնակ... Հենց որ արտասանում ես այս երկու բառը, աշքերիդ առջև կանգնում է հեքիաթային փոքրիկ մի տնակ, բարձր ու գեղեցիկ տանիքով, մուտքի մոտ կախված ճապոնական լապտերներով, տնակին հարող նրբագեղ թփուտներով, լճակներով և քարանձավներով: Այսպիսին է մեր պատկերացումը, իսկ իրականում...


Իրականում բոլորովին ուրիշ բան տեսանք մենք: Տների մեծ մասը կառուցված է երկարատև ամուսն համար: Գիտնականների կարծիքով՝ «դա, ըստ երևուցին, մշակույթի առանձնահատկություններից մեկն է, որ ճապոնացիները ժառանգել են իրենց նախահայրերից: Մրանք հյուսիս են գաղթել Հարավ-արևելյան Ասիայի արևադարձային կղզիներից»: Հարյուրամյակներ են անցել, և բնակարանների տեսքը փոխվել է: Հիմա դրանք հարմարված են մերձարևադարձային տոթ ու խոնավ ամուսնը: Շատ անհարմար են խոնավ ու ցուրտ ձմռանը: Ճապոնացիները հաճախ կատակում են, թե համեմատաբար կարճատև ձմռան դժվարությունները փիլիսոփայորեն են տանում, որպեսզի լիովին զգան երկարատև ամրող

Հրապանցը, կատակը՝ կատակ, բայց անհրաժեշտ է շատ տոկուն և արի լինել, որ ձմռան ցրտերին կարողանաս ապրել այդ թեթև տնակներում: Զէ՞ որ գրանք տաքացվում են կրակարանում մարմանդ այրվող ածուխի շերմությամբ:

Առաջին հայացքից թվում է, թե զյուղական տնակները մեկը մյուսին չատ նման են: Դա միայն առաջին հայացքից: Ավելի ուշադիր եթե նայեն, հեշտությամբ կնկատես, որ զյուղական շինությունների գետալները խիստ փոփոխություններ են կրել: Չնայած հաճախակի հրդեհներին, որ աղքատություն ու աղետներ են բերում, ճապոնացիներն իրենց տները կառուցում են փայտից:

Ճապոնացու տունը սովորաբար մեկ-երկու հարկանի է, պարզ, թեթև: Պատերը լինում են և' անշարժ, և' շարժական: Անշարժ մասերը տախտակներից են, որոնք ներսից ծեփված են կավով ու բրնձի մանրացրած ծղոտով: Շարժական պատերի շրջանակների վրա հաճախ գցվում է ստվար, բայց լուսանցիկ թուղթ: Գիշերը էլեկտրական լույսն ու թափանցիկ պատը ճապոնացու տնակը հեքիա-






թային հսկա մի լապտեր են դարձնում: Տնակի հետաքրքիր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հիմք և ձեղնահարկ չունի: Ձեղնահարկ չկա, բայց կա տանիք, որը յուրահատուկ հրապույր է տալիս տանը: Գյուղական վայրերում տանիքները պատրաստում են ծղոտից կամ եղեգնից, իսկ քաղաքներում հրդեհի երկյուղն ստիպում է կառուցել կղմինդրից, ցինկապատ երկաթից և սինթետիկ նյութերից:

Գյուղերում լուսամուտները ծածկում են յուղաթղթով, իսկ քաղաքներում ապակեպատ թեթև շրջանակներ են պատրաստում:

Պարզություն և խնայողություն՝ ահա ճապոնացու տնակի կահավորման ամենալավ բնութագիրը: Մարդիկ չեն սիրում կահույքի կուտակում: Տան լավագույն զարդարանքը ծաղկամանն է կամ գեղարվեստական գորգ հիշեցնող փոքրիկ մետաքսե փսխաթը: Հատակը ծածկվում է խսիրով: Տան միակ կահույքը լաքապատ ցածրիկ սեղանն է, որովհետև ճապոնացիները նստում, ուտում և քնում են հատակին:



Կ  
Կ  
Ե  
Բ  
Ն

Ճապոնիան գեղատեսիլ երկիր է, իսկ ժողովուրդը դյուրազգաց է, նուրբ և մեծ գեղարվեստական ճաշակի տեր: Եվ պատահական չէ, որ Ճապոնիայում ծաղկի կուլտուրան և պուրակների ձևավորման վարպետությունը համարվում են ազգային արվեստներից մեկը: Այստեղի թզուկ այգիները վաղուց են համաշխարհային հուշակ ձեռք բերել:

Տոկիոյի փողոցներից մեկում մեզ ցույց տվեցին մի լուսավոր շենք: Շենքի մոտ տնկված էր փոքրիկ մի այգի: Մեղ ասացին, որ դա հատուկ ուսումնարան է, այստեղ ուսումնասիրում են Խերանան՝ թարմ ծաղիկներից ծաղկեփունջ պատրաստելու արվեստը: Այդպիսի ուսումնարաններ ճապոնիայում շատ կան:



Որպեսզի ծաղիկները թարմ մնան և անհրաժեշտ դասավորություն ունենան, տափակ ծաղկամաններում կլոր կամ կիսակլոր մետաղյա թիթեղիկներ են օգտագործվում: Թիթեղիկը կարող է լինել նաև այլ նյութից: Որպես փշեր կարող են ծառայել սովորական գնդասեղները: Տափակ եցածր սափորների համար, որպես կանոն, ընտրվում են նուրբ ու վայրի խոտերը: Ճապոնացին, ծաղիկներն ընտրելիս հաշվի է առնում տարվա եղանակը, սենյակի լուսավորությունն ու կահավորությունը, ծաղկամանի գույնն ու ձեզ: Սակայն միշտ էլ ծաղկեփունջը պատրաստում է Խերանայի սկզբունքով:

Իշարկե սրանով շեն սպառվում Խերանայի բոլոր պահանջները...

Հրաշալի է Ծագող արևի երկրի բնությունը: Եվ իրենք՝ ճապոնացիները, ինորապես զգում են դրա գեղեցկությունը, իրենց տներում վերստեղծում գեղեցիկ բնության փոքրիկ անկյուններ: Բայց ոչ միայն տներում:

Տոկիո ժամանելու երկրորդ օրը մենք մեծ ուրախությամբ իմացանք, որ մի քանի այգիներ ու պուրակներ պիտի այցելենք: Իսկ այդպիսիները ճապոնիայի մայրաքաղաքում հարյուրից ավելի են:

Պատերազմից հետո լավ պահպանված պուրակներից մեկը՝ Հապու-էնն է: Որպես կանոն, ծաղիկները ճապոնա-



կան այգում բացակայում են: Դրանք չկային նաև Հապառ-էնում: Այգու արհեստական լճակները տարիների ընթացքում դարձել են բազմաթիվ վայրի բադերի, ձկնկուլների և այլ թռչունների բնակավայր: Իսկ հմկայական ծառերի կատարները՝ բույն շինելու տեղ:

Փոքրիկ բլրի գագաթին, թեյ ըմպելու արարողության հայտնի տնակի հետևում, վեր է խոյանում բուդդայական մեջյանը: Սա բերվել է Կորեայից ավելի քան հազար տարի առաջ: Ինչպես բուդդայական մեջյանը, այնպես էլ արարողության տնակը հանդիսանում են այգու տեսարժան վայրը: Առանց նրանց այժմ նույնիսկ դժվար է պատկերացնել Հապառ-էնը, ճիշտ այնպես, ինչպես առանց յուրահատուկ քարի լապտերների: Սրանց թիվը այգում հասնում է երեսունի: Առանձնապես գնահատելի է ճարտարապետության անխպելի կապը շրջապատող բնության հետ:

## ՅՈՍԵՅ ԹԱՏՐՈՆԸ


Կատոյի հետ ծանոթացանք Հինձայում: Ընկերոցս հետ մոտեցանք խաղալիքներով լեցուն վաճառասեղանին:

Արդեն ընտրել էինք մի քանի փայտե տիկնիկներ, բայց ոչ մի կերպ չէինք կարողանում համկանալ, թե ինչքան դրամ է ուղղում վաճառողը: Նա գումարը չէր կարողանում գրել թղթի վրա: Այդ ժամանակ օգնության եկավ ճապոնացի մի պատանի: Նա մինչ այդ կանգնած էր մեզնից քիչ հեռու: Դա Կատոն էր, Տոկիոյի համալսարանի ուսանող, որը ուսաց լեզու էր սովորում: Ճիշտ է, նա գեռնս լավ չէր խոսում, բայց իմացածն էլ բավական էր, որպեսզի կարողանայինք համկանալ իրար:

— Ես համկացա, որ դուք Սովետական Միությունից եք, բայց ամաշում էի մոտենալ,— ասաց մեղ Կատոն:

Մենք բարեկամացանք: Կատոն շատ զրուցաներ ու հետաքրքիր խոսակից էր: Նա երազում էր սովորել Սոսկվայի ժողովուրդների բարեկամության համալսարանում:

Մի զով իրիկուն մենք Կատոյի հետ զբոսնում էինք Տոկիոյի փողոցներում: Մեր ուշագրությունը գրավեց մի շենք: Մուտքի մոտ աշխուժություն էր: Մեր ականջին հասնում էին անժանոթ մեղեղու թուլլ հնչուններ: Մենք հարցական նայեցինք Կատոյին:



— Դա մեր ժողովրդական թատրոններից մեկն է — Յոսելի՛ մանրապատումների թատրոնը:

Ավելի քան երկու հարյուր տարի առաջ բուգդայական տաճարների այգիներում և պուրակներում երկացին թափառական երգիչների, պարողների ու պատմողների փոքրիկ խմբեր: Նրանք ելույթ էին ունենում հապճեպ պատրաստված փայտե հարթակների վրա: Տարիների ընթացքում թատրոնը զարգանում է և ստանում մշտական բնույթ: Յոսելի թատրոնը հասարակ ժողովրդի սիրած վայրն է: Համեմատաբար ցածր գնով ճապոնացին հաճույքով է այստեղ անցկացնում իր ազատ երեկոն:

Յոսելի ժողովրդական թատրոնում գլխավոր դերը պատկանում էր պատմողին՝ «Հանասիկային», որը նաև խաղում է: Բազմազան տեսարաններում կան և հաստամարմին, ծանրաշարժ ոստիկանը, և՛ հմայիչ հեյշան, և՛ բանվորները. այստեղ է նաև վատ սովորող գպրոցականը, և մինչև անգամ կատուն, որը հարմար տեղ է գտել մարմանդ այրվող մանղալի մոտ: Հանասիկայի վարպետությունն այն աստիճանի է հասնում, որ նա մենակ խաղում է իր երեք հերոսների դերը: Հանասիկայի ելույթներին հաջորդում են ժողովրդական երգն ու պարը:





...Մենք հետաքրքրությամբ լսում էինք Կատոյի պատմածը ժողովրդական թատրոնի մասին: Իսկ այդ նույն ժամին Հինձնյում մոլեգնում էին ոեկ-լամները, բացվում էին գիշերային բարերը, ոեստորաններն ու խաղատները, ուր հարուստները մի երեկոյի ընթացքում վիթխարի գումարներ են ծախսում:


Ահա կինոթատրոնի վրա հրավառվում են ահազին տառերը, որոնք հայտարարում են օվկիանոսի այն կողմից բերված նկարների անունները: Կինոթատրոնների մուտքերի մոտ փակցված բարձրախոսներից լսվում են գեղեցիկ կինոհերոսուհիների աղեկտուր երգը, ժամանակակից ջազի ողբը, ատրճանակների կրակոցները: Եվ մենք թախիծով մտածում ենք. «Չե՛ որ այդ ամենը իսկական ծաղր ու ծանակ է տաղանդավոր ճապոնական ժողովրդի ազգային մշակույթի նկատմամբ»...













































卷之三





## ԺԵՆՈԹՈՒԹՅՈՒՆՆ ԱԿԱՎԵՑ

Ստացվեց այնպես, որ մեր ծանոթությունը ինդոնեզիայի հետ սկսվեց պատմությունից. իսկ դա շափազանց հարուստ է։ Այդ երկիրը դարերի պատմություն ունի։ Եվ պատահական չէ, որ գիտնականները ձավան հնադարյան ցեղերից մեկի հայրենիքն են համարում։ Բազմաթիվ փաստաթղթեր պատմում են, որ ավելի քան երկու հազար տարի առաջ, ինդոնեզական կղզիներում բնակվող ժողովուրդները տնտեսական և կուտուրական կյանքի շատ բարձր մակարդակի էին հասել։ Նրանք զբաղվում էին մետաղամշակմամբ, կառուցում էին այն ժամանակի համար ուսումնական բարդ սիստեմներ, կատարում էին համարձակ ծովային ճանապարհորդություններ, իրենց փոքրիկ նավակներով հասնում հեռավոր երկրներ։

Մեր թվականության սկզբներին արշիպելագ են թափանցում հնդիկները, բերելով մի նոր կրոն՝ Հնդուիզմը։

Ավելի ուշ՝ առեստրականների հետ գալիս են հնդկական բուդդայականները։ Բուդդայական մշակույթը և կրոնը նույնպես մեծ ազդեցություն ունեցան


կղզիների բնակչության վրա: Պարսկաստանից և Հնդկաստանի արևմտյան ափերից ինդոնեզիա է գալիս իսլամը:


Եվրոպացիներն ինդոնեզիայում հայտնվեցին XVI դարի վերջերին: Թրանք պորտուգալացիներ էին: Դարի վերջում արևմտյան ձավալ եկան նաև հոլանդացիները: Ճարպկորեն օգտագործելով ֆեոդալական երկպառակությունները, հոլանդացիներն իրենց ձեռքը վերցրին իշխանությունը: 1619 թվականին նրանք զավթեցին նաև Զակարտան, հիմնադրելով այստեղ Բատավիա ամրոցը:

Սակայն հոլանդացիները հանդիպեցին բնակչության կատաղի դիմագրությանը:

Մեր դարի սկզբներից ինդոնեզացիների ազատագրական պայքարն ավելի կազմակերպված ձև ընդունեց, ստեղծվեցին առաջին քաղաքական կազմակերպությունները:

Եթ 1945 թվականի օգոստոսին ինդոնեզիան անկախ հանրապետություն գարձավ: Այդ օրվանից մինչև 1950 թվականը երիտասարդ հանրապետության ժանր տարիներն էին: Բայց ազատասիեր ժողովուրդը դիմացավ և՛ տնտեսական պաշարմանը, և՛ զինված ինտերվենցիային: Ու վերջնականապես կանգնեց ինքնուրույն զարգացման ճանապարհին:






«Երեք հաղար կղզիների երկիր»։ շատ անգամ այսպէս են անվանում ինդոնեզիան, որը գտնվում է Մալայան արշիպելագի վրա։

Հասարակածի երկու կողմում տարածված հանրապետության մայրաքաղաք Ջակարտան մեջ ողջունեց ջինջ երկնքով ու վառ արևով։

Նավահանգստից մինչև Ջակարտա քսան կիլոմետր է։ Ամբողջ ճանապարհը թաղված է փարթամ բուսականության մեջ։ Խճուղու երկայնքով շարված են ցածրիկ տնակները։ Երեմն ճանապարհի կանաչ պատճեղի արանքներից կապտին են տակս լճակների հայելիները։ Հետաքրքրվում ենք, թե ինչպես են առաջացել դրանք։ Պարզվում է, որ արհեստական են։ Մարդիկ դրանց մեջ աճեցնում են ձկների տարբեր տեսակներ, խեցգետիններ ու գորտեր, սրանք ինդոնեզիայում համեղ ուտելիք են համարվում։

Մեր զրոցասեր ուղեցույցը՝ միսս Աննին հետաքրքիր մանրամասնություններ պատմեց այսպիս կոչված գող-խեցգետնի մասին։ Մրանք կոկոսի ընկույզ շատ են սիրում և մի ժամանակ բնակչությանը մեծ վնասներ էին հասց-



նում: Գիշերը ափ էին դուրս գալիս, բարձրանում կոկոսի արմավինիների վրա, կրծոտում ճյուղերն ու ընկույզները թափում գետին: Ապա իջնում էին ու նախանձելի ախորժակով կուլ տալիս պարունակությունը:


Սակայն բնակչությունն այդ վնասատուների գեմ պայքարելու մի շատ հասարակ ու սրամիտ միջոց գտավ: Երկու կամ երեք մետր բարձրության վրա՝

ծառի բնին ամրացնում են

մի օղակ: Իշնելիս խեցետինները դիպչում են օղակին, և կարծելով, թե արգեն հասել են գետնին, թուլացնում են իրենց աքցաններն ու վար ընկնում, ջարդվում:

Առավոտյան մեր ավտոբուսները մտնում են Կոտուդել՝ Զակարտայի հնագույն շրջաններից մեկը:

Բազմահարկ տներն այստեղ, ինչպես և ամբողջ հնդոնեղիայում, շատ քիչ են: Դա բացատրվում է շատ հեշտ: Զէ՞ որ երկրում մոտ չորս հարյուր հրաբուխ կա, որոնցից ութսունը՝ գործող են: Դրանց մեծ մասը ճավայում է: Հանախակի երկրաշարժներն ու արևադաշտին կլիման ստիպել են, որ քաղաքի



կենտրոնական մասի շենքերը մարդիկ իրարից հեռու շինեն: Զգալի տարածություններ հատկացված են ծաղկանոցներին: Քաղաքի փողոցներում շատ տեսակի ծառեր են աճում: Զակարտային առանձին գումագեղություն են տալիս ծաղիկները՝ մուգ կարմիր, ալ, սպիտակ, ծաղիկներ ամեն տեսակի, գույնի ու երանգի:


Մայրաքաղաքում դեռևս պահպանվել են շատ ջրանցքներ, և առուներ, որոնք կտրում են փողոցները թե՛ լայնությամբ, և թե՛ երկարությամբ: Օտարների տիրապետությունը չէր կարող շանդրադառնալ երկրի և առանձնապես մայրաքաղաքի վրա:

Ջրանցքների ափերին, իրար խիտ կպած շարվել են խղճուկ հյուղերն ու խրճիթները: Նրանցից ոչ հեռու վեր են խոյացել սպիտակ տները, սրածայր կտուրներով, որոնք հիշեցնում են միջնադարյան նիդեռլանդների ճարտարապետությունը:

Զի կարելի չնկատել այն մեծ փոփոխությունները, որ կրել է Զակարտան վերջին տարիների ընթացքում: Հին, իարիսու տնակները տեղի են տալիս նոր ու գեղեցիկ շենքերին:

1945 թվականին, երբ ինդոնեզիան հանրապետություն դարձավ, մայրաքաղաքից յոթ կիլոմետր հեռու մկավեց Կերայորան-Բարու արբանյակ-քաղաքի կառուցումը: Այժմ սա դարձել է ամենագեղեցիկ լրջաններից մեկը: Նըպաստավոր տեղադրություն բարձունքի վրա, գեղեցիկ պլանավորված թաղամասեր, հարմարավետ կոտեջներ, որոնք ներդաշնակում են բնտիկից ու ապակուց կառուցված բազմահարկ շենքերի հետ, և գերջապես առատ բուսականություն. ահա այն բոլորը, ինչ բնորոշ է քաղաքի այդ նոր շրջանի համար:

Զակարտայի աշքի ընկնող առանձնահատկություններից մեկն էլ բաղմաթիվ տաքսի հեծանիվներն են, այսպես կոչված «բատչակները»: Բոլոր կենտրոնական փողոցները ուղղակի հեղեղված են այդ եռանիվներով: Զակարտայի բատչակները, համեմատած ուրիշ քաղաքների հետ, կաշվե փափուկ նստատեղեր ունեն: Բատչակի ուղենորդ նստում է սալլակում, իսկ վարորդը՝ հետեւի մասում: Բատչակներից բացի, փողոցները լի են ավտոմեքենաներով: Հանդիպում են նաև ծիասայլակներ...



## ԱՐԵՎԱԴՐԱՅԻՆ ՃՈՂԸ

Ինդոնեզիայում մենք առաջին անգամ զգացինք, թե ինչ է նշանակում արևադարձային շոգ: Ճիշտ է, առավատն ու երեկոն բավականին զով էին լինում, բայց կեսօրին արևն այնպես էր կիզում, որ զբոսաշրջիկներին անգամ դեպի ստվեր էր քշում: Այդպիս ենք ասում, որովհետև մենք շանում էինք ոչ մի վայրկյան իզուր շկորցնել: Շոգը ճավայում ոչ թե շերմաստիճանի բարձրությունից է, այլ օդի խննավությունից: Ամենաբարձր չերմաստիճանը, որ արձանագրովել է Զակարտայում վերջին ություն տարվա ընթացքում, եղել է Յելսիուսով 35,5<sup>0</sup>: Դա, թերևս Հայաստանի համար էլ այնքան շոգ չէ: Բայց օդի շատ բարձր (80—90<sup>0</sup>/0) խոնավությունը միանում է դրան և ստեղծում այն պայմանները, որոնց այդպիս դժվար են դիմանում «նորեկները»: Երկիրը շրջապատող ծովերի և օվկիանոսների ջրերի շերմաստիճանը սովորաբար ավելի բարձր է լինում, քան օդինը: Այդ բանը առաջացնում է ինտենսիվ գոլորշիացում և, իհարկե, առատ մթնոլորտային տեղումներ: Մի կողմից էլ քամիներն են ավելացնում կղզու խոնավությունը: Եվ ճավայում գրեթե ամեն օր անձնել է գալիս: Սովորաբար դրանք ամբողջային հեղեղներ են, որոնք տևում են մոտ մեկ ժամ: Հետաքրքիրն՝ այն է, որ տեղումները լինում են ամեն օր ճիշտ նույն ժամին:

## ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐՎԵՍՏԸ

Ինդոնեզիան բազում դարեր գաղութային ճնշման տակ է եղել, բայց ժողովուրդը պահպանել է ազգային մշակույթը: Այնտեղ հատկապես սիրված են պարերը: Զակարտայում մեզ համար կատարեցին ճավա, Բալի, Սումատրա կղզիների մի քանի պարերը: Մենք համոզվեցինք, որ պարն այստեղ բարձր զարգացում է ստացել: Պարերին նվազակցում է ժողովրդական նվազախումբը՝ զամելանը, որը կազմված է հարվածային գործիքներից՝ թմբուկներից, ցիմբալից, գոնգից և այլն: Ինդոնեզիան պարերը շատ բազմազան են: Նրանցից

մի քանիսը մարտական պարեր են և արտահայտում են ժողովրդի պայքարը թշնամիների գեմ, մյուսները՝ կրոնական ծեսեր ու սովորություններ են պատկերում։ Շատ հայտնի են ինդոնեզական էպոսի թեմաներով ստեղծված պարերը։

Մեզ հատկապես հետաքրքրեց Բալի կղզու պարարվեստը։

Բալին ճավալից բաժանված է նեղուցով, որի ամենանեղ տեղը մեկ կիլոմետր է։ Սակայն այնտեղ իսլամը տարածում չգտավ։ և կղզու բնակչությունը մինչև օրս էլ պահպանում է զնդուիզմի մի շարք առանձնահատուկ գծերը։ Բալիցիների պարերը լայն տարածում են գտել ամբողջ ինդոնեզական կղզիներում։ Այս «Սուլայրա» և Նիլուտամա աստվածութիների պարը։ Դա պար-կախարդանք է, որը մարզու մարմնից իբր թե գուրս է քշում շար ողիները։ Պարը կատարում են մանկահասակ աղջկեները և այն էլ տղամարդկանց մեջքներին։


Ես շատ եմ կարդացել ինդոնեզիայի հմուտ վարպետների մասին, բայց այն, ինչ տեսա մայրաքաղաքում, իմ սպասարկից վեր էր։ Խանութներում կարելի է ձեռք բերել արտակարգ վարպետությամբ պատրաստված արձանիկներ, մարդկանց, կենդանիների և թոշունների գեղեցիկ փայտե փիգուրներ։ Մեծ համբավ ունեն Բալի կղզում «սավո» թանկարժեք փայտից պատրաստված արձանիկները։ Նրանք այնքան նույր են և այնպիսի անկրկնելի հմայք ունեն, որ գժվար է նկարագրել։ Այդ վայելչակազմ, երկարաձիգ փիգուրներն ասես վարդագույն և շագանակագույն լույս են արձակում։



## ԱՐԵՎԱՐԵՎԱՐԵՎԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԵԳԻՏԱՐԱՆԸ

Մայիսի հինգին մեկնեցինք Բաքոր։ Այստեղ է գտնվում Ասիալի ամենահարուստ այգիներից մեկը։

Ավտորուսները, թեքվում են դեպի Անջո տանող խճուղին: Այս-տեղ մեքենաները արագացնում են իրենց ընթացքը: Խճուղու մի կողմում ձգվում է երկաթուղին, իսկ մյուս կողմում գալարվում է Զիւիվունք փոքրիկ գետակի արծաթագույն ժապավենը: Տեղ-տեղ ձգված են ձկնորսական ցանցերը, մերթ ընդ մերթ երկում են այսպիս կոչված «փղային» արմավենիների մոխրա-սպիտակավունքները: Տեղ-տեղ կարմրին են տալիս կանաչ դաշտով մեկ ցրված տնակների կղմինդրածածկ կառւրները:




Ահա մի ուրիշ ճանապարհ, որի երկու կողմում մեծ-մեծ խանութներ կան: Անցնում ենք նավազնացության դպրոցի, համալսարանի բժշկական ֆակուլտետի, կինոստուդիայի շենքերի մոտով: Կառուցապատման բնույթը հետպհետեւ փոփլում է: Փոխվում է նաև բուսականությունը: Ավելի հաճախ են հանդիպում կառւչուկի ու թեյի տնկատաններ, կոկոսյան արմավենիների պուրակներ, դրան հաջորդում են բրնձի ջրալից արտերը:

Մի ժամից հետո մտնում ենք Բաքոր: Սա ծովի մակերևույթից 265 մետր բարձր է: Նրա թիկունքում բարձրացնել է լեռնաշղթան: Քաղաքից հարավ վեր են խոյանում Սալակ ու Պանդրանգո գործող հրաբուխների գագաթները: Նրանցից հեռու չէ նաև Գրեգե հրաբուխը: Բաքորը ինդոնեզիայի հնագույն քաղաքներից և գիտական օջախներից մեկն է:


Այստեղ են գտնվում՝ գյուղատնտեսական խոշորագույն փորձակայնը, Կպուչուկի ինստիտուտը, քիմիական խոշոր լաբորատորիան, անասնաբուժական և գյուղատնտեսական բարձրագույն քոլեջները... Ահա և հոշակավոր բուսաբանական այգին: Սա իր մեծությամբ ու հարուստ հավաքածուներով զարմացնում է ոչ միայն այցելուներին, այլև մասնագետներին: Սա բույսերի ամենախոշոր հավաքածուն է Հարավ-Արևելյան Ասիայում:

Տասը հազար տեսակի ծառ է աճում այստեղ, 500 հազար տեսակի բույս եք և պահպանում այգու հերթարիումը: Այգու թանգարանում երեք միլիոնից ավելի միջատների, կաթնասունների ու սողունների նմուշներ կան:

Դլխավոր մուտքից մի փոքր հեռու գտնվում է պրեզիդենտի պալատը, որը կառուցված է դեռ 1856 թվականին: Այս պալատում 1954 թվականին տեղի ունեցավ Հարավ-արևելյան Ասիայի երկրների հինգ պրեմիեր-մինիստրների հանդիպումը: Պալատի ճարտարապետությունը ներդաշնակ է շրջապատին: Իսկական հեքիաթային գեղեցկություն: Ոչ մի նկարագրություն չի կարող վերաբերել այդ հրապուրիչ տեսարանը, ոչ մի լուսանկարչական ապարատ չի տպավորի մեր տեսածը: Կարո՞ղ է արդյոք, հասարակ լուսանկարը հաղորդել արևադարձային բուսականության այն անկրկնելի շունչն ու շքեղությունը, որ մենք զգացինք Բաքորում...



## Ա Զ Ա Տ Փ Ա Մ Ի Ե



Մի քանի օր առաջ  
մենք հիանում էինք ճա-  
վայան ծովով. օրվա ըն-  
թացքում սա երանգավորվում է անկրկնելի գույներով: Բայց ծովի ամ-  
բողջ հմայքը մենք զգացինք միայն այն ժամանակ, երբ ափ իշանք:  
Մի անգամ, ազատ ժամին ես մոտեցա առափնյա ծանծաղուտներից մեկին  
և հմայված կանգ առա: Կապույտ ու թափանցիկ ջրում սպիտակ ու բաց վար-  
դագույն մարզանները տարածել էին նուրբ ծիւերն ու կարծես կանչում էին  
մեղ: Տեղ-տեղ նրանք սուտակների պես հուրմատում էին, թվում էր, թե՞նու-  
թյունը այստեղ է հավաքել իր ամենաթանձր ու վառ գույները: Գեղեցիկ մար-  
զանների մոտ խայտում էին ծկնիկների երամները: Նրանցից մի քանիսը նույն-  
քան թափանցիկ էին, որքան և ցուրը: Երբեմն նրանց էր մոտենում այդ կախար-  
դական թագավորության «պատկառելի» ներկայացուցիչներից մեկը, ապա  
ծանրորեն լողալով հեռանում: Արեմ շոայլ ճառագայթները թափանցում էին  
ջրի խորքերը. կարծես թե ցանկանում էին ավելի լավ ցուց տալ հեքիաթային  
գեղեցկությունը:

«Միիայլի կալենին» ջերմանավը մեկնում է ջակարտայից երեկոյան:  
Ավելի հավաքված մարդիկ ու նավահանգստում կանգնած նավերի ժողովուրդը  
գոշում են. «Բարեկամություն, խաղաղություն»: Մենք պատասխանում ենք  
նույն կանչով: Ու դեռ երկար ժամանակ նավահանգստում երեսում էին մեզ  
ճանապարհող ինդոնեզացիները, որոնք ձեռքով էին անում, հրաժեշտ տալիս:

Sturm




## Հ Ա Ճ Ե Լ Ի Ս Ն Ս Կ Ն Կ Ա Լ

Մեր ջերմանավն արդեն ընթանում էր Ցելլոնի հարավ-արևմտյան ափերի մոտով։ Առաջին բուքեներին դժվար էր հավատալ, թե մեր աշրի առաջ է այն կղզին, որը հիացմունք է պատճառել տասնյակ և հարյուրավոր ճանապարհորդների, գիտնականների ու գրողների։ Ա. Պ. Չեխովը Ցելլոնը «Դրախտի անկյուն» է անվանել, «Հավերժական հրաշք-կղզի», — գրել է հայտնի գերմանացի բնագիտ էրնեստ Հեկկելը, «Աշխարհի ամենահիանքանչ կղզիներից մեկը», — հիացել է Մարկո Պոլոն։ Գրքերում դուք կկարգաք «Օվկիանոսի մարգարիտ», «Եգեմական աշխարհ», «Հավերժական ամառվա երկիր»...

Եվ ահա, մեր առաջ է նաև Հնդկական օվկիանոսի հեքիաթային երկիրը...

Ցելլոնի մայրաքաղաքը Կոլմբոն է, խիստ յուրահատուկ ու հետաքրքիր մի քաղաք։ Աշքի է ընկնում եվրոպական մասը, որը սահմանագատված է բուն քաղաքից և կոչվում է ամրոց։ Եվ հթե հարուստների բազմահարկ տներն





ու գեղեցիկ վիլաները ներդաշնակում են կենտրոնի առաջ բուսականության հետ, ապա բնիկների խրճիթները տեղավորված են կեղուու ծայրամասերում: Եվ պատահական չէ, որ շատերը Յելոնը կոչում են «Մեծ հակագրությունների կղզի»: Բայց հակագրություններ կան ոչ միայն բնակչության կյանքում, այլև քնության մեջ: Զէ՞ որ Յելոնի շրջանները խիստ տարբերվում են միմյանցից, թէ՛ բուսականությամբ ու կենդանական աշխարհով, և թէ՛ տնտեսական գարգացման մակարդակով:

Մենք Կոլոմբո եկանք այն օրերին, երբ սինգալները նշում էին իրենց ազգային ու կրոնական տոնը՝ Բուգդայի ծննդյան օրը: Քաղաքում նախատոնական եռուզեռ էր: Փողոցների խաչմերուկներում և հրապարակներում ամրացնում էին Բուգդայի պատկերները, տների ու խանությունների ճակատները զարդարում: Էին թղթե լապտերներով, պատրաստվում էին հրավառության: Զքավորները հնարավորություն շունեին զարդարելու իրենց խրճիթները, գոյա համար էլ յուրաքանչյուրն իր տան մուտքի մոտ զնում էր կոկոսի յուղով լի փոքրիկ մի լապտեր:

Ամենուրեք մեծ աշխուժություն էր զգացվում: Այդ էր պատճառը, որ զրուանքից Կոլոմբո վերադարձող մեր ավտորուսը ստիպված մի քանի անգամ կանգ առավ: Պարզվեց, որ կղզում մի սովորություն գոյություն ունի. տոնական օրերին բոլոր անցորդներին հյուրասիրում են գինիով ու մրգերով, նրանց համար ցուցադրում իրենց պարարվեստը: Մենք, ի՞շարկե, բացառություն շկազմեցինք: Կոլոմբո հասնելու վրա էինք, երբ ավտորուսի առաջը կտրեց ազգային տարագներով և գունադարդ վատ դիմակներով մի խումբ: Այդուեղ մենք դիտեցինք մի փոքրիկ ներկայացում: Հետաքրքիրն այն է, որ կանանց դերերը կատարում էին տղամարդիկ, և բավականին նրբորեն: Մեքենային մուտեցան մի քանի սինգալներ, որոնք արտահայտիչ շարժումներով մեզ հասկացնում էին, որ իշնենք ու իրենց հյուրերը լինենք: Մեզ շնաջողվեց օգտվել այդ սիրալիր հրավերից. շտապում էինք Կոլոմբոտ:


Մեր ուղեկցից բացատրությունները լսելուց հետո հյուրասիր ցելոնցիները շշփոթվեցին: Ահագին մատուցարանները ձեռքներին մեքենա բարձրացան մի քանի պատանիներ: Մատուցարանները լիքն էին հյութալի անանասներով ու բանաններով:

## Կ Ա Լ Ա Մ Բ Ա

Մեր ծանոթությունը Կոլոմբոյի հետ սկսվեց նավահանգստից: Այստեղ գիշեր-ցերեկ եռում է աշխատանքը: Բեռնվում ու բեռնաթափվում են նավերը, կատերները ափ են տեղափոխում մարդկանց, սահում են մրգերով բեռնված թեթև մակուլիները: Կոլոմբոյի նավահանգիստը աշխարհի լավագույն նավահանգիստներից մեկն է:

Արհեստական ծովածոցում բազմաթիվ նավեր էին կանգնած: Մեր չերմանավը կանգ առավ այդտեղ: Քաղաքի հարավային մասում գեռ մնացել են պորտուգալացիների կառուցած ամրոցի ավերակները: Այժմ այստեղ վեր են խոյանում քաղաքի գլխավոր թաղամասերը, ուր և կենտրոնացած է գործնական կյանքը: Ամրոցին և այլ միջնադարյան շինություններին փոխարինել են բանկի, փոստի, հեռագրատան շենքերը, առաջնակարգ խանութները, ընկերությունների երկնաքերը շինությունը, բայց մինչև այժմ էլ այդ շրջանը կոչում են «ամրոց»:

Քաղաքի հրաշալիքներից մեկը փարոսի բարձր աշտարակի կողմանաներն են: Նավահանգիստը Կոլոմբոյի սիրտն է: Փողոցներում աճում են շատ հետաքրքիր ծառեր, որոնք գիշերը փակում են տերենները՝ խոնավություն




Համլաքելու համար, իսկ վաղ առավոտյան բացում են ու թեթև անձրև մաղում անցորդների վրա:


Ցելոնի մայրաքաղաքը ձգվում է ծովափի երկարությամբ: Արա ուշագրավ փողոցներից մեկը՝ Գոլոռուզը, ավելի շուտ առափնյա պողոտա է:

Այստեղ կառուցված են ցածրիկ տներ, որոնք թաղված են փարթամ կանաչի մեջ: Այստեղ կան շքեղ ուստորաններ, կինոթատրոններ, եկեղեցիներ: Շատ յուրահատուկ է Կոլոմբոյի ծովափնյա պուրակը, հայտնի Գոլ-Փեյսը: Այստեղ է, որ իրիկունները գրունում են ցելոնցիները: Օվկիանոսից փշող հովը գովացնում է նրանց:

Ամրոցից հյուսիս տարածված է քաղաքի բազմամարդ առևտրական շրջանը՝ պետտախը: Փողոցների երկարությամբ ձգվում է փոքրիկ կրալակների ու խանութների մի ամբողջ շարք, արհեստանոցները: Տեղ-տեղ ապրանքները գրված են հենց մայթերի վրա: Հենց այստեղ էլ կանայք ճաշ են հիփում, լվացք անում, կերակրում երեխաններին: Պետտախի յուրաքանչյուր փողոցը արևելյան մի շուկա է իր խայտարդես ու բազմալեզու ամբոխով:

Մայրաքաղաքի գեղատեսիկ պարկում ինչպես արևադարձային, այնպես էլ այլ կլիմայական գոտիների հազվագյուտ կենդանիներ կան: Ուրախ թութակները թառել են հենց մուտքի ծառերի վրա: Ափսոս, որ չենք հասկանում նրանց





«լեզուն», և միայն Հիանում ենք վառ փետուրներով: Նկատելի է, որ թռչունների մեծ մասը կանաչ կամ վառ կալույտ երանգավորում ունի: Սա լավ է ներդաշնակում բնության հետ: Այդպիսիք են Ցելլոնի «Չափյուղա» ձենկուները, բազմաթիվ սիրամարդերը, վայրի հավերը, կաքավները: Ուղեկցողն ասում է, որ այգու էքսպոնատները բերված են աշխարհի բոլոր կողմերից:

...Ցելլոնում ձախակողմյան շարժում է ընդունված, ու մենք ոչ մի կերպ չենք կարողանում ընտելանալ դրան: Ցելլոնի վարորդները երեխ զարմանում են, թե ինչո՞ւ Սովետական Միությունից եկած Հյուրերը փողոցն անցնելիս նայում են ճիշտ հակառակ ուղղությամբ: Կոլոմբոյի փողոցները լիքն են թե ավտոմոբիլներով, և թե՝ ոփկաներով, բայց մենք մեզ թույլ չտվեցինք նստելու սայլակը, որը պետք է ձգի ուժասպառ ծերունին կամ դեռահաս պատանին:

## ՈՒԾԵՐՈՒԹՅՈՒՆ՝ ՓՂԵՌԸ...

Ծատ բազմազան ու հետաքրքիր է Ցելլոնի կենդանական աշխարհը: Կոլոմբոյի կենդանաբանական այգին համարվում է Հարուստներից մեկը: Ամենաաշխուց տեղը, իշարկե, կապիկների վանդակների առջևն է: Մենք հասանք այն պահին, երբ շինապանզեն իր նախանշաց վեցացը էր ու սեղանից հավաքում էր ափսեները և ուտելիքների մնացորդները:

Ահա և օձերի վանդակը, այստեղ սողունների հարուստ հավաքածու կատակնուցավոր օձեր, ճարպոտ պիտոններ... Նրանց կողքին, զրից իր սարսափելի գլուխն է հանել կոկորդիլոս՝ գավիալան: Այդ կոկորդիլոսներից շատերի երկարությունը հաճախ հասնում է ութ մետրի: Ցելլոնում շատ կան նաև վառերանդ մողեսներ, հատկապես առանձնանում է այսպես կոչված արյունախումը, սա ծոծրակին առամնավոր կարմիր կատար ունի:

Երեկոյան ժամը հինգին մեզ հրավիրում են նայելու հանրահուշակ «փղերի կրկեսը»: Ցելլոնի փղերը իրենց մեծությամբ զիջում են հնդկական փղերին: Նրանց հոտերն ապրում են կղզու հարավ-արևմտյան մասում: Սակայն վերջին ժամա-

նակներս դրանց քանակը խիստ կրծատվել է եվրոպացի որսորդների վայրագ որս անելու հետեւ վանքով: Ընտելացրած փղերին ցելլոնցիները օգտագործում են անտառահատման և շինարարական աշխատանքներում: Նրանք հանդիս են գալիս նաև կրկեսներում:


Տեղավորվեցինք ճմապատ ամֆիթատրոնի աստիճաններին և հաճուքը սկսեցինք դիտել ներկայացումը: Փղերը ասպարեզ են գալիս իրենց տերերի ուղեկցությամբ: Մանր-ծանր գլուխ տալով հանդիսականներին, նրանք անցնում են ծրագրի կատարմանը: Նախ պարում են թմբուկների նվազի ներքո, հետո կանգնում առջեխ ոտքերի վրա, կնճիթով ողջունում ժողովողին և անցնում գետնին մեկնված տիրոջ վրայով: Ներկայացման վերջում ամբոխի ուրախ բացական չությունների տակ փիզը տիրոջ գլուխը բերանն է առնում ու պտտեցնում նրան հարթակի շուրջը: Իսկ փղի ձագը աշխուժորեն անցնում է հրապարակով: Նրա վզին մի տախտակ կա, որի վրա գրված է՝ «Ներկայացման վերջ»:



## ՀՐԳԵՀ... ԲԵՐՍՆԻ ՄԵԶ

Անսովոր էին մեզ համար Հեռավոր Արևելքի ճաշերը: Հույսներս կարել էինք ճապոնական խոհանոցից: Այնտեղի ճաշացուցակներում հաճախ կարելի էր կարդալ՝ «ջաճել, լավ կերակրված շնիկ»: Յելլոնում էլ ճաշացուցակները մնե դպուշությամբ էինք բացում, փորձում «էլզոտիկ» ճաշերը:

Ցելլոնցիները, հիմնականում, սնվում են բրնձով, կոկոսի արմավենու բարիքներով ու ձենեղենով: Առանց բրնձի դժվար է պատկերացնել կղզու բընակիչների նախաձաշը, ճաշն ու ընթրիքը: Բրնձը մատուցվում է խաշած



վիճակում՝ կծու սոսւսով, որը կոչվում է քերրի և պատրաստվում է տեսակ-տեսակ համեմունքներից, բանջարեղիններից, կարմիր պղպեղից, կոկոսի կաթից և այլ մթերքներից: Քերրին այնքան կծու է, որ անգամ մենք, կծու ճաշերի սիրահարներս, ուտելիս տանջվում էինք: Բերաններիս մեջ իսկական «Հրդեհ»՝ էր սկալում: Այդ կծուն գոնե մսի հետ լիներ: Այնինչ Յելլոնում միս շատ քիչ են օգտագործում:

Կղզում աճում են բաղմատեսակ բանջարեղիններ. պոմիդոր, սոխ, սխտոր, ծաղկակաղամբ և կաղամբ, ոլոս, գետնամինձոր, դդում: Յելլոնցիների գլխավոր կերակուրներից է նաև ձուկը, ինչպես և խեցգետինները, օմարները, տրեպանգները և սատրեները:

Կղզին հարուստ է մրգերով՝ հյութեղ, հինգ-վեց կիլոգրամանոց անանասներով, երեխայի գլխի չափ նարինչներով, բանաններով: Այս մրգերը կարելի է տեսնել ամենուրեք:


Հարավյային երկրների ամենատարածված մրգերից մեկը մանգոն է: Սա խոշոր, վառ նարնջագույն տանձի նման է: Սեխն այստեղ ուտում են լիմոնով, կամ աղով ու պղպեղով: Նուրբ ու հոտավետ պտուղ է մանգուստը: Սա այնքան էլ մեծ չէ, մուգ կարմիր է, իսկ միջուկը ձյան պես սպիտակ:

Կոլոմբոյի փողոցները և հատկապես մայթերը տեղ-տեղ թրչված էին կարմիր պուտերով: Սկզբում մենք

չեինք հասկանում, թե գա ինչ է:

Հետո պարզվեց: Յելլոնում շատ է

տարածված բետել կոշիկած ծամոնը, որ մարդիկ ծամում են ու թքում: Այդ ծամոնը պատրաստվում է բերտելյան պղպեղի տերևներից, որոնց մեջ արևելյան արմավենու ընկույզ են լցնում ու լավ



խանձլած կրափոշի: Այդ ծամոնի առաջացրած կարմիր թուքը շատ գրգռիչ աղղեցություն է թողնում մարդու օրգանիզմի վրա:

Այդ զարմանալի թմրագեղը ծամում են Հարավային Ասիայի միլիոնավոր մարդիկ և հատկապես նրանք, ովքեր ծանր ֆիզիկական աշխատանք են կատարում:

## ՀԿՆԱՐՍՆԵՐԻ ՍՎԱՆՈՒՄ

Երկրում ճանապարհորդելու հնարավորություն մենք չունեինք. բայց մի քանի կարճատև ուղևորություններից հետո տեսանք, որ Կոլոմբոյի շրջակայքը խիստ բնակեցված է:

Դյուլերն առանձնապես շատ են ծովափին: Դրանք արմավենիների պուրակների մեջ կորած ոչ այնքան մեծ ձկնորսական ավաններ են: Յելլոն կղզին շրջապատող ծովերը հարուստ են ձկներով: Բնական է, որ ձկնորսությունը տնտեսության կարևոր ճյուղերից մեկն է: Օրվա բոլոր ժամերին ծովի վրա ձկնորսական նավեր կարելի է տեսնել:


Մենք գտնվում ենք ձկնորսական ավաններից մեկում: Ավելի երկարությամբ ձգված է լայն փողոցը: Կավածեկի խրճիթները կուչ են եկել հատ ու կենտ արմավենիների տակ: Ավանում ամայություն է, միայն մի քանի երեսա խաղում են փոշու մեջ:

—Հետաքրքիր է, ինչո՞ւ են տների պատուհաններն այսքան փոքր, —հարցնում է մեզնից մեկը: Բացատրում են, որ դա արված է գագանների հարձակումներից պաշտպանվելու համար: Հետո քիչ շեն լինում վնասակար միջատները:

## ԹԵՅԻ, ԿՈՎԱՍԻ, ՀԱՅԻ ԺԱՌԻ ՈՒ ԿՅՈՒԶՈՒԿՅԵՐԻ ՄԵՍԻՆ

Յելլոնի գյուղատնտեսությունը միակողմանի զարգացում ունի: Թէյ, կառւշուկ և կոկոսի ընկույզ, սրանք են նրա արտահանման հիմնական մթերքները:

Թէյը Յելլոնում գտել է իր երկրորդ հայրենիքը: Հիանալի կլիմայական պայմանները հնարավորություն տվեցին, որ դա տիրանա կղզու հսկայական





տարածություններին: 1873 թվականին Յելլոնում տնկվեց թեյի առաջին թուփը, իսկ այժմ նրա բազմաթիվ տեսակները զբաղեցնում են հարյուր հազարավոր հեկտար բնարի հողեր և ոչ միայն հարթավայրերում, այլև լեռնալանջերին: 1200 մետր բարձրության վրա աճող թեյը շատ բարձր է գնահատվում: Թեյի արդյունաբերության 20 տոկոսը Յելլոնին է... նա աշխարհում գրավում է երկրորդ տեղը:

Ավտոբուսը կտրուկ շրջադարձ կատարեց ու կանգ առավ: Բայց սա մեր տեսած «գաշտը» չէ: Երևացող ամբողջ գաշտը և մոտակա սարալանջերը ծածկված էին մուգ կանաչավուն թփուտներով: Եթե մեզ չղկուշացնեին, մենք գլխի շէինք ընկնի, որ հենց դա է թեյը: Իսկ մենք սպասում էինք տեսնել «գնդաձեա» թփեր: Գնդաձե թփեր մեզ մոտ էլ կան, —բացարում է ուղեկցողը, —բայց դրանք աճում են լեռներում:

Այստեղ էլ մեծ հետաքրքրություն կար գետի սովորական զբոսաշրջիկները: Հենց որ ավտոբուսը կանգ առավ, մեզ շրջապատեցին տնկաստանի աշխատողներն ու մոտակա գյուղերի բնակիչները: Նրանք եկել էին մեզ ողջունելու:

Յելլոնի բնանկարի թագուհին կոկոսյան արմավենին է: Ծովեղերքից սկսած, քաղաքի մարդաշատ փողոցներով՝ վերջացրած, ամենուրեք կանգնած է նա իր պահապեղ հագուստով: Կողմբոյի շրջակայքի բոլոր ձանապարհներին իրար հաջորդող արմավենիների պուրակներ կան: Արևելքում «Կյանքի ծառ» են կոչում արմավենին: Նա շատ բարիքներ է տալիս, համեղ հյութ, անասունների կեր, փայտ և այլն: Կոկոսի ընկույզը խոշոր է, բայց թեթև է և չըի մեջ չի սուզվում: Կեղևը մուգ շագանակագույն է, իսկ պտուղը՝ կանաչ: Կեղևը շատ ամուր է և մեծ դժվարությամբ է չարդվում: Ներսը լեցուն է կոկոսա-





միջուկով՝ սպիտակ, առաձգական սննդարար զանգվածով, որը խակ ընկույզի համ ունի: Կոկոսի մեջ կորիզի փոխարեն բաղցրահամ կաթնանման հեղուկ է լցված: Բայց մեզ չհամոզեց այն, ինչ գրում են գրքերում: Մի քանի անգամ փորձեցինք այդ հյութը և չհասկացանք նրա հմայքը: Ինչպես երևում է մեզ շատ է «երես տվել» մեր աղբյուրների սառնորակ ջուրը:


Կոկոսը մեծ դեր է խաղում Յելլոնի տնտեսության մեջ: Կղզում հավաքվում է ավելի քան երկու միլիոն ընկույզ: Հատկապես գնահատվում է կոկոսի

յուղը, կոկոսամիջուկը, թաղանթի վերնամասի թելիկները՝ քո՞րան, չորացրած ընկույզը և, իհարկե, հյութը, որից պատրաստում են քացախ ու խմիչքներ՝ պինի (թողի) և օղի՝ արաք:

Արմավենու հակայական բները օգտագործվում են շինարարության մեջ: Հաճախ դրանց բունը փորում են և օգտագործում որպես նավակ: Կոկոսի յուղը ստացվում է միջուկից, քամելուց հետո մնացած քուսպ՝ փունակը, տալիս են անասուններին: Կոկոսի փափուկ մասը հիանալի կիսաֆարբիկատ է, ձեռներեց տնտեսուհին սրանից կարող է մի քանի տեսակ կերակուրներ պատրաստել: Քո՞րայից պատրաստում են պարաններ, ճոպաններ, խոզանակներ և այլ իրեր:

Յելլոնի արևմտյան ծովափը կարելի է համեմատել վիթխարի արևադարձային այգու հետ: Դեռ երևանում մենք ծրագրում էինք կղզու արևադարձային անտառների թափուտներում զրուսնել, բայց, ավագ... երկրի մեծ մասը մենք դիտեցինք ավտորուսի պատուհանից: Հասկանալի է, որ այդպիսի արագությամբ սլանալիս բնանկարները փոփոխվում են կինոժապավենի նման: Բայց և այնպես ամենառութեղ տպավորությունը մեզ վրա թողեց արևադարձային բուսականության հրաշալիքներից մեկը՝ հակայական ջեկը կամ հացի ծառը: Մեծ հետաքրքրությամբ էինք նայում մենք զարմանալի ծառին, որի ահազին պտուղները կախված են անմիջապես բնից:

Խոշոր, ձվածե, բաց կանաչավուն պտուղները երբեմն քանինդ կիլոգրամ քաշ ունեն: Սառաբնին կպած են կարծ, բայց շատ պինդ պոչերով: Պտուղի մեջ բաց մոխրագույն զանգված կա, որ յելլոնցիները օգտագործում են կերակուրների մեջ:



Հացի ծառի մի այլ տեսակ էլ կա, որը կոչվում է «ցնորք-միրգ»: Այդ ծառի պատուղները զգալիորեն զիջում են հացի ծառի պտուղներին և կախված են բնական ձևով՝ ճյուղերից:

Կառւչուկը Ցեյլոնում իր նշանակությամբ երկրորդ կուլտուրան է: Բայց այն շրջաններում, որտեղ զբաղվում են այդ ծառերն աճեցնելով, միայն դրանով չեն բավարարվում:

Կառւչուկի մեծ պուրակներին հաջորդում են բրնձի դաշտերը: Իսկ ինչպիսին է կառւչուկաբեր, հանրահայտ բրազիլական հենցան:

Կառւչուկի ծառերը աճեցվում են տնկարաններում: Մեկ ու կես տարուց հետո մատղաշը փոխադրվում է հատուկ հողամաս: Այստեղ շարունակվում է աճը վեց-յոթ տարի: Կառւչուկաբեր ծառի տեսքը առաջին հայացքից անհրապույր է: Հասարակ, խամրած տերևներ, մոխրագույն բուն. ահա կառւչուկաբերը: Բայց բրազիլական հենցայի պուրակներն ունեն իրենց յուրահատուկ հմայքը: Պարզ եղանակին արեի շողերը սաղարթներից ներս են թափանցում և պուրակները լցնում նուրբ արծաթավուն և վարդագույն փայլով:


†

## ՑԵՅԼՈՆԸ ԹԵՎ Է ՍՌՆՈՒՄ...

Ցեյլոնը բազմագարյան քաղաքակրթության երկիր է: Պատմությունը մեզ թողել է տեղեկություններ Հյուսիսային Հնդկաստանի կալա պետության արքայազն Վիջայայի մասին: 543 թվականին (մեր թվականությունից առաջ), նա իր ջոկատով ափ է դուրս գալիս Ցեյլոնի հյուսիսարևմտյան մասում և մի քանի բնակավայրեր հիմնում:

Եվրոպացիներն այդ կղզին եկան 16-րդ դարի սկզբներին: Դրանք պորտուգալացիներ էին: Գրավելով Կոլոմբո և Գալե քաղաքները, նրանք ամրացան Ցեյլոնում: Բայց պորտուգալացիների տիրապետությունը երկար չտևեց: Շուտով երևացին առաջին հոլանդացիները: 1638—1658 թթ. պորտուգալացիներն ու հոլանդացիները պատերազմ էին մղում Ցեյլոնի համար. վերջ ի վերջու պորտուգալացիները պարտվեցին:

Ինչպես պորտուգալացիներին, այնպես էլ հոլանդացիներին հրապուրում էին կղզու համեմունքները: Ցուրաքանչյուրն ուզում էր գրանց ամբողջ առևտուրն



իր ձեռքում կենտրոնացնել, մանավանդ դարչինը, որը շատ լավ բերք էր տալիս և հսկայական եկամուտներ բերում: Հոլանդացիները կոլոմբո, նեղոմբա, կաղիրանի, ջահի և այլ քաղաքների ու բնակավայրերի մոտակալաքում ստեղծել էին դարչինի տնկարաններ: Հոլանդական ընկերությունը փորձում էր Ցեյլոնում աճեցնել այնպիսի բույսեր, ինչպիսիք են՝ սուրճը, բամբակը և թթենին, բայց հաջողություն չունեցավ:

Միայն XVIII դարի առաջին կետում, անգլիացիների գալուց հետո, սուրճը դարձավ կարևոր կուլտուրա: Հետաքայլում, երբ սուրճի տնկաստանները չորացան, անգլիացի տերերին մեծ եկամուտ բերեցին՝ թելը, կառւչուկը և կոկոսային ընկույզը:

Բայց Ցեյլոնի ժողովուրդները շաշտվեցին օտարերկրյա ծանր լծի հետ: Կղզու բնակչությունը զինված պայքարի դուրս եկավ:

Քսաներորդ դարի 20-ական թվականներից ազգային աղատագրական շարժման մեջ ներգրավվեց նաև Ցեյլոնի բանվորությունը: Հակաանգլիական շարժմանը միացավ նաև գյուղացիությունը:

1935 թվականին ստեղծվեց սոցիալիստական պարտիան, իսկ որանից հինգ տարի հետո՝ արհմիությունների ֆեդերացիան: Թե՛ սրանք, և թե՛ 1943 թվականին հիմնված կոմունիստական պարտիան, մեծ դեր խաղացին աղատագրական շարժման գործում: Ստեղծվեց դեմոկրատական ուժերի ազգային ձակատ: 1948 թվականին Ցեյլոնն անկախություն ստացավ:


Հայրենականիրական ուժերի հետագա համախմբման շնորհիվ, 1956 թվականի ապրիլին Ցեյլոնի պառլամենտի ընտրություններում հաղթեց միացյալ ժողովրդական ձակատը:

Նոր Ցեյլոնի կառավարությունը հենց առաջին օրվանից երկրի ինքնուրույն քաղաքական ու տնտեսական զարգացման ուղղություն վեցրեց:


\* \* \*

...իրիկունները, երբ վերադառնում էի նաև՝ գիշերելու, կանգնում և հմայվածի պես նայում էի օվկիանոսին: Հնդկական օվկիանոս... Մենք հիանում էինք քեզանով ինգոնեղիայի կղզիների մոտ, զմայլվում թուրելի Մարին Դրայվի առափնյա փողոցում զբունելիս, լողանում քո տաք, ասես թավշե ջրերում: Դու փշրում էիր քո լեռնացած ալիքները մեր նավակողին, փոթորկվում ու

ոռնում ահալից, երբ մենք Հնդկաստանից գնում էինք ֆրանսիական Սոմալի...  
Բայց ոչ մի տեղ գու այդքան բանստեղծական և հրապուրիչ չէիր, ինչպես  
Յեյլոնի ափերի մոտ: Ես նայում էի, թե ինչպես էիր գու արթնանում լուսա-  
բացին, դեն նետում կապտավուն շղարշը, արծաթի պես փայլատակում արևի  
շուայլ ճառագայթների մեջ: Ես լսում էի, թե ինչպես էին քա ալիքները խոր-  
հրդավոր շշնչում, շշնչում ծովի երգը...



# ԱՐԴՎԱՐԱՐ




## «ՀԻՆՉԻ

ԽՈՒՍԻ—

ԲՀԱՅ,

ԲՀԱՅ»



Հնդկաստան ժամանելու օրը Սովետա-Հնդկական ընկերությունում՝ կայացավ մի երեկո, որը անջնջելի տպավորություն թողեց սովետական զբոսաշրջիկների վրա:

Դահլիճը լեփ-լեցուն է: Ներկաների թվում են ականավոր հասարակական գործիչներ, գրողներ, նկարիչներ, կինոյի ու թատրոնի աշխատողներ:

Հայտնի հնդիկ գրող Արքասը պատմում է,

— Այս դեպքը եղավ Սովետայում: Մի անգամ երեկոյան մտա ուստորան ընթրելու, ժամը տասնմեկից անց էր. իսկ այդ ժամին ուստորանում ազատ տեղ գտնելը գրեթե անհնար է: Իմ և բարականի միջև տեղի ունեցավ հետեւյալ քարց ու պատասխանը:

— Ես քաղցած եմ:

— Չի կարելի, ընկե՛ր, ուստորանը փակ է,

— Ես ուտել եմ ուզում:

— Չի կարելի:

— Ես հնդիկ եմ:


— Խնդրե՛մ, խնդրե՛մ...

Եվ նա դռները լայն բացեց իմ առաջ:


Սովետական գրոսաշրջիկները Արբասին նվիրում են Սովետական Միությունում լույս տեսած նրա գիրքը։ Հուզված գրողը գիրքը սեղմում է կրծքին։

Նա ասում է. «Այս գիրքը ինձ համար հատկապին թանկ է, որովհետեւ լույս է ընծայվել ձեր մեծ երկրում։ Սովետական Միությունում ես շատ եմ սիրում ձեր ժողովրդին»։

Դժվար է բաժանվել ընկերներից։ Ուշ գիշերին մենք հրաժեշտ ենք տալիս գոշելով՝ «Հինգի ոռուի բնայ, բնայ»։ Այս խոսքը ձանապարհորդության առաջին օրվանից մինչև վերջին օրը մեզ հետ էր։



ՀԵԳԿԱԾԱՆԻ  
ԺՈՎԱՅԻՆ  
ԴԱՐՊԱՍԸ




Ասում են, որպեսզի զգաս Բոմբեյի գեղեցկությունը, հարկավոր է քաղաք մտնել ծովի կողմից: Այս առումով մեր բախտը բերեց... Իսկապես որ, մի հրաշալի տեսարան է բացվում մեր առաջ: Անհնար է չվրայլվել «Հնդկաստանի ծովային դարպասի» գեղեցկությամբ: Դեպի հյուսիս ձգվում է ծովափի կապուտ ժապավենը, արևի շողերի տակ փայլիլում են շենքերի սպիտակ ճակատները, ալիքները դանդաղ ճողփում են ափին, վեր են ձգել իրենց կատարները գեղիրան արմավենիները...


Բայց գործարանների հարյուրավոր ծխնելույզների ծուխը և նավահանգստում կանգնած բազմաթիվ նավերը հիշեցնում են, որ Բոմբեյը արնելքի խոշորագույն արդյունաբերական կենտրոնն է նաև:

Ամբողջ օրը քաղաքի փողոցներում կյանքը եռում է: Այս ու այն կողմ են շտապում մարդիկ, վաղվարում են սպատանի լրագրավաճառները: Հենց մայթերի վրա տեղափոխված են մանրավաճառների «կրպակները» ինչպես արևելյան շատ քաղաքներում:


Առաջնյա փողոցը՝ Մարին Դրայլը, բոմբեյցիների սիրած վայրերից մեկն է: Այստեղ առանձնապես հմայիչ է երեկոն, եթե հրավառվում են հարյուրավոր էլեկտրական լապտերները և փողոցը ողողում իրենց լույսով: Պատշաճական չէ, որ բոմբեյցիներն այդ փողոցն անվանում են «Թափավորական մանյակ»:




Մարին Դրայվի վրա է գտնվում քաղաքի տեսարժան վայրերից մեկը՝ մեծ քարե կամարը, որը կոչվում է «Հնդկաստանի դարպաս»: Սա կառուցվել է 1912 թվականին: Քաղաքի հետաքրքրական անկյուններից մեկը՝ Կումբալայի ու Մալաբարի բլուրներն են: Սրանց լանջերին տեղավորված են հարուստների տները, աճում են հայտնի «կախովի այգիները»: Իշարկե, այգիները օդում չեն, այդպես են անվանում, որովհետև գրանց տակ քաղաքի ջրամբարն է: Այգիները բոլորովին չեն ներդաշնակում շրջապատի էկզոտիկ բնության հետ: Կանոնավոր կտրտված գաղոններ, թփուտներ, կանաչ պատեր և զաղանների ֆիգուրներ, որոնք աճեցված են հատուկ տեսակի բույսերից: Այստեղ կան թե՛ կանաչ կապիկներ, թե՛ կանաչ փղեր և ուղտեր...



Բուրդի կողոքներուն



## ԱՅՐԻ ՈՒ ԴՀՈԹԻ



Այստեղ ազդային տարագներով հնդիկները, կարելի է ասել, մեծամասնություն են կազմում: Տղամարդիկ հագնում են դհոթի, իսկ կանայք՝ սարի: Դհոթին կարված հագուստ չէ, զա մի երկար կտոր է, և փաթաթվում է աղղոքի ու ոտքերի շուրջը: Գույների մեջ գերակշռում է սպիտակը: Դհոթիից բացի որոշ տղամարդիկ հագնում են սովորական շալվար ու բլուզներ կամ կիտելներ:

Կնոջ հագուստի հիմնական մասը՝ սարին է, որը նույնական երկար կտոր է: Նրա մի ծայրը փաթաթվում է աղղոքերին, իսկ մյուսը ծածկում է մարմնի վերեկ մասը և ուսը: Կտորի աղատ ծայրով կանայք ծածկում են գլուխները: Տարագը լրացվում է կարճ բլուզով, որ հագնում են սարիի տակից: Սարին զարդարում են տարբեր ասեղնագործ նախշերով:

Դեղարվեստական կտորներ գործելու արհեստը Հնդկաստանում հինգ հաղարամյակի պատմություն ունի: Մեր դարի քանակական թվականներին ինդոս գետի հովտում հնագետները հայտնաբերեցին նյութական կուլտուրայի թանկարժեք հուշարձաններ: Այդ արձանների հագուստները դարդարված են նախշերով: Դրա մասին են խոսում նաև բաղմաթիվ որմնանկարներ, որոնք ծածկում են Բուդդայի Աջանտի ժայռափոր տաճարների պատերը\*:

Դեղեցիկ գործվածքների պատրաստման հարուստ սովորույթները Հընդկաստանում պահպանվել են մինչև մեր օրերը: Բումբակյում մեծ ժողովրդականություն է վայելում «պաթոլան»: Դա հատուկ զգեստ է, որը հագնում է հարսնա-

\* Աջանտի տաճարները տարեգրվում են II դարով մ. թ. ա. — մ. թ. VIII դարով:

ցուն հարսանիքի օրը, գործում են տարբեր գույն ու երանգ ունեցող մետաքսե թելերից: Ընդորում, հետաքրքրական է, որ յուրաքանչյուր թելը սկզբում ներկվում է մի քանի վառ գույնի: «Պաթոլայի» նախշի կարևոր մասը գործվում է ոսկի թելով:

Ընդհանրապես հնդկական ժողովրդական ձեռագործներն այնքան տարբեր են ու բազմազան, որ գժվար է անգամ պատկերացնել: Բավական է ասել, որ յուրաքանչյուր շրջան մշակում է իր նախշերը ու դրանք ստեղծելու եղանակները: Մենք նկատեցինք, որ շրջազգիստները գործվում են ոչ միայն բազմերանգ թելերից, այլև հովունքներից, երկաթե փայլվուներից, ապակու ու փայլարի կտորտանքներից և անգամ փոքրիկ հայելիներից, որոնք ներհյուսվում են ընդհանուր զարդանկարի մեջ:


Սարիի նախշերը սովորաբար կազմված են քուսականության ու թուշունների կյանքը պատկերող զարդանկարներից: Իսկ վարագույրը և այլ տնային իրերը զարդարվում են խոշոր նախշերով՝ մարդկանց, ծառերի ու տների պատկերներով:


## ԼՐՈՒԹՅԱՆ ԱՅՏԱՐԱԿՆԵՐԸ

Արևմտյան Հնդկաստանի թանգարանում մեզ անշափ հետաքրքրից մի յուրահատուկ մակետ. դա «լոռության աշտարակների» մակետն էր: Հենց նույն օրը մեզ ցույց տվեցին աշտարակները: Մրանց մեջ թաղում էին պարսերին:

Պարսերի պատմությունն ու սովորությունները այնքան հետաքրքիր են, որ արժե պատմել նրանց մասին ավելի մանրամասն:

Պարսերը մի փոքր ժողովուրդ են. հեռավոր անցյալում ապրում էին Պարսկաստանում: Մեր թվականության 641-ին Օմար խալի փը նրանց արտա-






քըսում է հայրենիքից: Նա ցանկանում էր, որ պարսերը նույնպես մուսուլ-մանական կրոն ընդունեն: Սակայն նրա ջանքերն իգուր են անցնում: Թողնելով իրենց բնակվայրը, պարսերը գալիս հաստատվում են Պարսկական ծովածոցի թրմուղ կղզում: Բայց այստեղ էլ նրանց հանգիստ չի թողնում ոխակալ խալիքը: Հետապնդողներից փախչելով, պարսերը առագաստանավերով տեղափոխվում են Կաթոխավար թերակղզու մի փոքրիկ քաղաք, որն այժմ մտնում է Բոմբեյի նահանգի մեջ: Մի քանի հարյուրամյակների ընթացքում պարսերն այնպես են բազմանում, որ քաղաքի սահմանները նեղ են գալիս նրանց: ԽVI դարի վերջին պարսերն անցնում են Կամբէյան ծովածոցն ու խարիսխ գցում Դամանից հարավ: Հնդիկ իշխան Զադո Ռամայի հյուրընկալության շնորհիվ գաղթականները նոր բնակավայրում աղատ ապրելու հարավորություն են ստանում: Բայց այստեղ էլ խաղաղ կյանքը երկար չի տևում: Շուտով Զադո Ռամայի վրա հարձակվում է շահ Ահմադաբարդը: Պարսերը զենքը ձեռքներին պաշտպանում են իրենց անկախությունը, բայց թշնամին հաղթում է: Սահպած, նորից գաղթում են և նորից բնակություն հաստատում Հնդկաստանի արևմբայան ծովափին: Հետզետե նրանք համախմբվում են Բոմբեյում:

Պարսերի համար կրակը, օգը, ջուրն ու հողը սրբություններ են, դրա համար էլ հողը չպղծելու համար նրանք ընտրել են թաղման շատ տարօրինակ եղանակ:

Պատկերացրեք բարձր ու սնամեջ մի աշտարակ, որն ունի տղամարդկանց, կանանց ու մանկական բաժանմունքներ: Մեռածի մարմինը գրվում է համապատասխան բաժանմունքի վանդակի վրա: Հենց որ դիակ բերողները հեռանում են, վրա են տալիս գառնանդղները: Մի քանի րոպէ հետո վանդակի վրա մնում են միայն ննջեցյալի ոսկորները, որոնք թափում են վանդակի տակ՝ փոսի մեջ և կրով ծածկում: Անցնում է մի քանի օր, և արոտիկական կիզիչ արևը մոխիր է դարձնում աճյունը:

## Ք Ա Ր Ե Լ Հ Ա Ե Ր

Բոմբեյից վեց մղոն դեպի հարավ-արեելք կա մի կղզի, որը ծածկված է արևագարձային փարթամ բուսականությամբ: Այդ կղզում են գտնվում VILL դարին կառուցված հայտնի անձավային տաճարները: Էլեֆանտ կղզին հրապուրում է զբոսաշրջիկներին նաև նրանով, որ դրա անտառներում վայրի կապիկների մեջ հոտեր են ապրում:



Մենք կղզի եկանք ցերեկը: Հենց որ ափ իջանք, մեղ շրջապատեցին երեխաները: Այդ «պատվո պահակի» ուղեկցությամբ մենք զառիթափ լանջով բարձրացանք դեպի անձավային տաճարները, որոնք փորլած են մի մեծ ժայռի մեջ: Դրանք համարվում են ճարտարապետության աշքի ընկնող հուշարձաններ: Լավ են պահպանվել քարե բարձրաքանդակները: Արանք պատկերում են նիվա աստծու կյանքի դրվագներից մի քանիսը:

Շիվան հնդուկիզմի երեք գլխավոր աստվածներից մեկն է: Նա անձնավորում է բնության կործանիչ ուժերը և միենույն ժամանակ՝ անբնդհատ վերածնվելու հատկությունը: Մի պատի վրա նա քանդակված է բազմագել, մյուսին՝ բազմաձեռ, երրորդում՝ եռաշքանի: Առանձնապես մեծ համբավ ունի եռաշքանի Շիվայի արձանը, որը քանդակված է մի ժայռաբեկորից: Գտնվում է կենտրոնական սրահներից մեկում: Վարպետորեն է քանդակված աստծու դեմքը: Անհայտ հեղինակի ստեղծած կերպարը լի է վեհությամբ ու աղնվությամբ:

## ՎԵՅՐԻ ԿԵՊԻԿՆԵՐԻ ՄՈՏ

Մ ենք գնում ենք վայրի կապիկներ տեսնելու: Բայց որոնում ենք նրանց և չենք գտնում: Ու երբ հուսահատված, որոշում ենք ետ դառնալ, մեկը կանչում է: — Նայեցիք այստեղ, կապիկներ:

Նայում ենք ցուցյա տված ուղղությամբ: Փարթամ սաղարթների մեջ թաքնված, մեղ են հետևում մոտ հիսում կապիկ: Անփորձ աչքը նրանց դժվար է հայտնաբերում: Ինչո՞վ հրապուրել, ինչպե՞ս մոտ կանչել նրանց: Պայուսակներից խնձոր ենք հանում: Դժվար թե կապիկը նայի այդ պտուղին ու շգայ-

թակովի... Մի վայրկյան վարանելուց հետո համարձակներից մեկը ցատկում է վար, ձեռքից թոցնում է խնձորն ու փախչում: Շուտով մեր ամբողջ պաշարը սպառվում է: Գուգուալով ու ճշճալով կապիկները հարձակվում են միմյանց վրա, խլում խնձորները, ով ունի՝ թաքցնում է բերանի մեջ, այտի տակ: Մեր կապիկները վինչացնելով ետ են մղում երիտասարդներին, իսկ սրանք կծոտում են գանդաղաշարժ «ծերուկներին»: Մի խոսքով, շտեսնված խառնաշփոթություն է շուրջը: Կապիկների քանակը աճում է զարմանալի արագությամբ. աղաղակի ու ճիշերի վրա գալիս են շատ ուրիշ կապիկներ...»

Հնդկաստանի քաղաքներում էլ կապիկներ շատ կան: Դա բացատրվում է նրանով, որ նա սուրբ կենդանի է համարվում: Դրա համար էլ նրանց ոչ ձեռք չի տալիս: Այնինչ կապիկները սնունդ հայթայթելու համար կողոպտում են այգիներն ու բանջարանոցները, մտնում են տները, գողանում են մթերքներն ու բնակչությանը մեծ վնասներ հասցնում:

Ավստրիացի աշխարհագետ Լյուդվիկ Կրենկը երկար ժամանակ ապրել է Հնդկաստանում: Իր գրքում նկարագրել է, թե ինչ մեծ զանքեր են գործադրում գյուղացիները, որպեսզի ցանքերը պաշտպանեն կապիկների հարձակումներից...»

\* \* \*

Արդեն տանն ենք: Ես վերանայում եմ ճանապարհորդական նոթերս: Եվ ցանկանում եմ դրանք վերցացնել իլլա էրենբուրգի խոսքերով.

«Այն ամենը, ինչ եվրոպայում աշք կծակեր՝ Հնդկաստանում բնական է թվում: Այդ երկիրը ապրում է միաժամանակ և՝ անցյալում, և՝ ներկայում, և՝ ապագայում, եթե դա հասկանալի չէ, ապա չի կարելի հասկանալ ո՛չ հնգամյա պլանները, ո՛չ կրոնական թափորները, ո՛չ ժողովրդի մտքերը, ո՛չ էլ Ռաբինդ-րանաթ Տագորին, որը խոսում էր իր հավատի մասին դեպի Ռւպանիշագը և որը ողջունում էր աշխարհի առաջին սոցիալիստական կառավարությունը...»:





Արծվին Հայկի Գրիգորյան  
ՖՈՒԶԻՑԱՄԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՐԱՐԱՏ

Խմբագիր՝ Վ. Տալյան  
Գեղ. Խմբագիր՝ Ա. Մանդակունի  
Տեխ. Խմբագիր՝ Կ. Սարգսյան  
Վերստուգող սրբազնիներ՝ Գ. Սարգսյան  
Հ. Աւազյան

Վ.Ֆ. 10552

Պատվեր 1527

Տիրած 10 000

Հանձնված է արտադրության 4/X 1962 թ.:

Ստորագրված է տպագրության 30/III 1963 թ.:

Թուղթ՝ 70×92<sup>1/16</sup>, տպագր. 6,0 մամ.=7,02 պայմ., մամ.՝

Բրատ. 6,3 մամ. + 9 ներդիր:

Գինը՝ 40 կոպ.:

Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների

և պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության

պոլիգրաֆիկոմբինատ, Երևան, Տերյան 91: